Սմբատ Բիւրատ
Խմբագրութիւն «ՓԻՒՆԻԿ» Ի Աղեքսանդրիա

S. Burat
Rédaction «PUNIG»
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ
Ղրշ.
ՏԱՐԵԿԱՆ... 45
Վեցամսեայ 25
—
ԲԱԺՆԵԳԻՆԸ
ԿԱՆԽԻԿ Է

ՓԻՒՆԻԿ

ԱՐՏԱՍԱՀՍԱՆ
Ֆր.
ՏԱՐԵԿԱՆ... 15
Վեցամսեայ 8
—
ԿՈՎԿԱՍ
ՏԱՐԵԿԱՆ Բալ. 6

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ — ՁՈՐԵՔՇԱԲԹԻ 16 ԱՊՐԻԼ 1902 — Թիւ 47

ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Քաղաքական կացութիւնը մանաւորապէս ծանրակշիռ է այս պահուս Պալքանեան ցամաքակղզիին մէջ։ Մակեդոնիէն հասնող լուրերը աւելի վրդովիչ են քան երբէք. եւ կրակը, որ մերթ ընդ մերթ իր կայծերը կ'արձակէր, հիմա կապառնայ հրդեհել բոլոր Պալքանները։

Ժամանակէ մը ի վեր, եւրոպական մամուլին մէջ զրոյցներ կը շրջէին, յառաջիկայ գարնան Պօրիս Սարաֆօֆի չնորհիւ կազմակերպեալ ապստամբութեան մը մասին եւ իրողութիւնները հիմա կը ձգտին հաստատել այս մասին տիրող սկեպտիկութեան ունայնութիւնը։ Մինչդեռ կապասէինք որ Միս Էլէն Սթօնի վիպային եւ հանելուկային առեւանգումով Մակեդոնական յեղափոխութիւնը բաբախուն այժմէութիւն մը պիտի ստանար Եւրոպական դիւանագիտութեան համար Ամերիկօ-Թուրք հաւանական միջադէպի մը ստեղծումով, ահա Սոֆիաի քոմիթէն զայն թերեւս աւելի դրական հողի մը վրայ կը փոխադրէ։

Աւելի լաւ։

Արդարեւ, դէպքերու յարաճուն ծանրութիւնը ինչպէս եւ իրենց ներդաշնակ նկարագիրը կազմակերպեալ ապստամբութեան մը ծրագրին գրեթէ բոլոր երեւոյթները կընծայեն, եւ թերեւս չափազանց յանդգնութիւն չէ հաւատալ որ Եւրոպա քաղաքական ծանր պատասխանատուութեանց նախընթաց օրերուն մէջ կը գտնուի ներկայ ժամուս։

Ինչ որ դրականօրէն կը հաստատէ կացութեան բացառիկ ծանրութիւնը, Մակեդոնիոյ եւ Ալպանիոյ մէջ միանգամայն խլամ ու քրիստոնեայ տարրերուն միասնական եթէ ոչ համերաշխ գործողութիւններն են որ զուգահեռաբար կը ձգտին օսմանեան իշխանութիւնը խորտակելու քանի որ այս իրողութեամբ իսկ իրարու դատի կը ծառայեն, անդիտակցաբար, ճիշդ է, այլ օգտակարաբար։ Բայց ինչ որ մանաւանդ կացութիւնը եղականօրէն կնճռոտելու ընութիւն ունի, այն ծայրահեղ միջոցներն են զորս Բարձրագոյն Դուռը — կը փութանք աւելցնել երկու քրիստոնեայ պետութեանց խորհրդին վրայ — կարծած է թէ պարտաւոր էր ձեռք առնել ենթադրական խռովութիւնները զսպելու համար եւ որոնք, — ո՞վ կը համարձակի տարակուսիլ — ուրիշ արդիւնք չը պիտի ունենան եթէ ոչ հրդեհը սնուցանել։ Այս պահուս, Թուրք զօրքերուն թիւը 50,000ի կը հասնի Մակեդոնական նահանգներուն մէջ։

Այն արիւնալից ընդհարումները որոնք գրեթէ ամեն օր տեղի կունենան Մակեդո-

նական հրոսախումբերուն եւ Թուրք կանոնաւորներուն միջեւ, պուլկարական սահմանագլուխին վրայ եւ որոնք, պէտք է խոստովանիլ, միշտ ի նպաստ յեղափոխականներուն չեն աւարտիր, Միս Սթօնի փրկանքով ճոխացած այն ելեւմտական՝ փայլուն վիճակը ուր Սոֆիաի քօմիթէն կը գտնուի, այս պահուս, ապահովաբար, եւ որ ռազմական միջոցներու հայթայթումը ապահովելով հանդերձ՝ բնութիւնն ունի բաղդախնդիր կամ անձնուէր կամաւորները հաւաքելու ի նպաստ Սուրբ Գործին. այն ընդհանուր դժգոհութիւնը որ կը տիրէ Արնաւուտներուն մէջ, Օսմանեան իշխանութեանց դէմ, ինչպէս եւ մանաւանդ այն յայտնապէս ապստամբական դիրքը զոր Ռուկովանները, Հաքինները եւ Միրտիպները ցեղերը բռնածին Համիդի հա դէպ. վերջապէս, այն հիւանդագին մատանջութիւնը զոր Բարձրագոյն Դուռը ցոյց կուտայ ներկայ կացութեան մասին եւ որ ի յայտ կուգայ այնքան տրակոնական որքան յիմար միջոցներով, — այս ամէնը կը գծեն իրականութիւն մը որուն վրդովիչ ախտանիշներուն մասին ներելի չէ վայրկեան մը տարակուսիլ։ Բայց այժմէն իսկ օգտակար է մերձաւորաբար նախատեսել պատահականութեանց ընդհանուր նկարագիրը, դրծելու համար այն ուղին որուն պէտք է հետեւիլ եթէ առարկայական իրողութեանց վերածուին։

Ամէն ինչ սակայն կախում ունի այն համեմատութիւններէն զոր ապստամբական շարժումը կրնայ պատահաբար ստանալ, ինչպէս եւ այն թատրին ծաւալէն ուր տեղի կունենայ։ Մին այն ատոյգ տարրերէն զոր փորձառութիւնը կընձեռէ մեզ այս մասին պատճառէ արդիւնք այն փոխադարձ անտարբերութիւնն է որ հաստատուրէն եղած է միշտ — մանաւանդ Թուրքիոյ պատմութեան մէջ — յեղափոխական խլրտումներու եւ կոտորածներու միջեւ։ Ահա թէ ինչո՛ւ, առանց հերքուելու երկիւղին, կարելի է նախատեսել որ եթէ Սարաֆօֆի հրոսախումբերը շարունակեն գործել այն թափով որով դէպքերը ցոյց կուտան թէ սկսած են, քաղաքակիրթ մարդկութիւնը — հաւանականաբար, չքսելու համար ապահովաբար — ականատես պիտի ըլլայ Մակեդոնիոյ մէջ Հայկական վայրագութեանց երկրորդ տարբերութեան։ Անշուշտ, ճշմարիտ է որ Եւրոպական կարելի միջամտութեան մը երկիւղը որ ամեն ատեն պաշարած է Համիդին երեւակայութիւնը, տեսակ մը անկեղծութիւն կը դրոշմէ Մեծ Եպարքոսին այն շրջաբերականին զոր ուղղած է Մակեդոնական նահանգներու վալիներուն եւ ուր կը պատուիրուի ասոնց՝ պաշրպօզուֆներու աջակցութեան չը դիմել խռովութիւնները զսպելու համար։ Բայց Օսմանեան յոռի վարչութեան գործելու մէթոտներուն անիրաւ պատիւ մը եղած պիտի ըլլար հաւատալ որ Թուրք իշխանութիւնները իրենց ըմբռնած կամ աւելի ճիշդը՝ Համիդին գաղտնաբար փափաքած եղանակովը չէ որ պիտի գործադրեն եպարքոսական հրահանգները։ Պէտք է սպասել Բրօ-Արմէնիաի թղթակցութեանց սարսռալու համար այն դաղտնութիւններէն զորոնք Թուրքերը սկսած են թերեւս գործել։ Հավասի վերջին հեռագիր մը կը ծանուցանէ որ կանոնաւոր զօրքերը երկու եկեղեցի քանդած են։

Պալքանեան քաղաքական կացութիւնը չահագրգռելով մեզ այն չափով որով կրնայ հայկական հարցին լուծման նպաստաւոր իրերու վիճակի մը ծնունդ տալ, կենսական է գաղափար մը կազմել Սլաւ իշխանապետութեանց հաւանական դիրքին մասին, դէպքերու զարգացման վճռական փուլին պահուն։ Այս մասին, ժխտական ու դրական տարրերը չափազանց անվաւեր նկարագիր մը ունենալ կը թուին, որպէս զի թոյլատրելի ըլլայ ստուգօրէն նախատեսել իրենց քաղաքականութեան անմիջական առարկայականը։ Թերեւս, նախարարապետ Տանէֆ, — որ Պոլսոյ մէջ զգացուց առարանկէ թէ ինք պատասխանատու է միայն Պուլկարիոյ մասին, եւ որ Ս. Բէթերսպուրկ կը գտնուի, — չը թերացու առիթէն օգտուիլ յիշեցնելու Զարին այն պարտականութիւնները որոնք կը ծանրանան Թօմանոֆներու կայսրութեան վրայ, մասնաւորապէս Սլաւ ցեղին այդ կեղեքեալ հատուածին նկատմամբ։ Բայց, միւս կողմէն, պէտք չէ մոռնալ որ ռուսական դիւանագիտութեան յատկանիշը կը-կազմէ զգացումէ զերծ իրապաշտութիւն մը, որուն միջոցներուն փոփոխականութիւնը չը վնասեր նպատակին անսասանութեան։ Ճշմարիտ է որ Արեւելեան գործերուն ամենէն փորձառու մասնագէտներէն մին որպիսին է կոմս Կոլուխովրսքի իր վերջին ճառին յոռետես գոյներով որոշ հեղինակութիւն մը կընծայէր այն հաստատումին թէ Զարին պալքանեան

քաղաքականութիւնը Սլաւ տարրին համար նպաստաւոր բարեշրջութիւն մը սկսած էր կրել:

Բայց ենթադրութիւնները պարտին տեղի տալ դրական իրողութեանց առջեւ եւ պաշտօնական աղբիւրէ կը հաւաստեն որ Վիեննայի եւ Ս. Բեթերսպուրկի դահլիճները համաձայն են 1897ի Աւստրօ-Ռուսական պայմանադրութեան հիման վրայ գործել — այն է իրերու այժմի վիճակին պահպանումը — թէ ի Սօֆիա եւ թէ ի Սթամպօլ: Ռուսական դեսպան Զինովիեֆ պահանջած է Բարձրագոյն Դռնէն անմիջական ու ազդու միջոցներ ձեռք առնել խռովութիւնները զսպելու համար, առանց խաղաղ բնակչութիւնը կեղեքելու. նմանապէս, կը հաւաստեն թէ Աւստրիա պիտի հրաւիրէ Սերպիական կառավարութիւնը, որպէս զի թոյլ չի տայ զինեալ հրոսախումբերու սահմանէն անցնել, ապստամբներուն միանալու համար: Նաեւ, քիչ նշանակալից չէ պաշտօնական ֆրէմտէնպլաթի գործածած լեզուն ներկայ դէպքերուն առթիւ: Ուրեմն պէտք է հեռացնել արտաքին հզօր օգնութեան մը վարկածը:

Սակայն, միւս կողմէն, ստոյգ է թէ, օրինական տեսակէտով, ոչինչ կը կաշկանդէ պուլկար իշխանապետութեան գործելու ազատութիւնը: Ընդհանուր կատարածի մը պատասխանատուութիւնը, — որուն հաւանական նկարագիրը ուղիղ կը համեմատի Բարձրագոյն Դրան ձեռք առած զինուորական միջոցներուն ընդարձակութեան հետ — պուլկար հանրային կարծիքը Թուրք կառավարութեան դէմ ծայրայեղօրէն գերագրգռելու բոլոր սաղմերը կը պարունակէ եւ, ինչպէս որ պատահեցաւ, կրետական հարցին առթիւ, Յունաստանի մէջ, պուլկար կառավարութիւնը գեղեցիկ պատրուակ մը պիտի գտնէր այդ իրողութեան մէջ, յաչս Եւրոպական պետութեանց, իր միջամտութեան օրինաւոր կամէութեանց վճռական որոշումի մը ձեւը տալու:

Արդ, ամէն ոք կընդունի թէ պուլկարօ-Թուրք ընդհարումը Եւրոպական դիւանագիտութեան համար անախորժ անակնկալներ վերապահելու բնութիւնն ունի. որովհետեւ յայտնի է թէ իրերու ներկայ վիճակին մէջ, Պալքանեան պետութիւնները երկու մրցակից խումբերու դասաւորուած են եւ տրուած ըլլալով մանաւանդ հելլէններու կուրօրէն հակակրական դիրքը Մակեդոնական յեղափոխութեան հանդէպ նմանօրինակ ընդհարում մը կոչուած է, ապահովաբար, հրդեհին թատերավայրը ընդարձակելու:

Ահաւասիկ ինչու համար պիտի մեզի թոյլատրենք ներկայ բոպէն բարեպատեհ նկատել, նախապատրաստական միջոցներ ձեռք առնելու համար, ի նախատեսութիւն քաղաքական պատահականութեանց որոնք ուրուագծուիլ սկսած են արդէն, Մայր Հայրենիքին մէջ, զուգահեռաբար եթէ ոչ հաւասար չափով, յեղափոխական շարժում մը գծելու նպատակով:

Ա. Ճ.

ՔՐՈՆԻԿ

ԱԶԳԱՅԻՆ

— ՆՈՐԸՆՏԻՐ ԹԱՂ. ԽՈՐՀՈՒՐԴԸ, ամսոյս 13ին, Կիրակի կէս օրէն ետքը ժամը 4 ին, Ազգ. Առաջնորդարանին մէջ կատարելով իր անդրանիկ նիստը, բացարձակ միաձայնութեամբ կազմեց իր դիւանը հետեւեալ կերպով.

ՎՍԵՄ. ՊՕՂՈՍ ԲԱՇԱ ՆՈՒՊԱՐ Ատենապետ
» ԱԲՐԱՀԱՄ ՊԷՅ ԲԱՐԹՈՂ Փոխ-Ատպտ.
» ՄԻՀՐԱՆ » ԳԱԼՖԱԵԱՆ Գանձպտ.
ԱԶՆ. Տ. ԳԱՌՆԻԿ ԶՊՈՒԳՃԵԱՆ Ատենադպիր
» » ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄՈՒԹԱՖԵԱՆՑ
» » ՀԱՅԿ ԷՔԻՉԼԷՐ Խորհրդական
» » ԱԼԻՔՍԱՆ ՃԷՎԱՀԻՐՃԵԱՆ

Գեր. Ս. Առաջնորդը պաշտօնական զեկոյցով մը հաղորդեց զայս տեղւոյս օտար թերթերուն ու եգիպտական կառավարութեան:

— Ս. ԱՌԱՋՆՈՐԴԸ, հակառակ իր հիւանդագին վիճակին, Կիրակի օրուան պատարագին առեն խօսեցաւ քարոզ մը, որուն մէջ բաւական շունչ դրաւ ու ճիգ ալ թափեց արդարացնելու համար ամբողջ մէկ տարուան մէջ իր բռնած քաղաքականութիւնը — եթէ ներելի է այս բառով մեկնել զերազանցօրէն երկդիմի ու անմեկնելի ընթացքը, զոր Նորին Սրբազնութիւնը բռնեց պայքարին հանդէպ: Այդ քարոզին վերլուծումը չ'ենք ուզեր տալ այս անձուկ էջերուն մէջ. կը նշանակենք զայն ու կը վերապահենք ապագային: Յիշենք միայն

թէ՝ Գեր. Ս. Առաջնորդը, իր ըմբռնած կերպովը պատմելէ ետքը բոլոր անցած դարձածները, բեմէն յայտարարեց թէ՝ քուէարկութիւնները խիստ կանոնաւոր կատարուեցան, թէ՝ ընտրութեանց տեղապիրը քանի մ՝անդամներու կողմէն չ՝ստորագրուիլը կարեւորութենէ զուրկ է. թէ՝ ընտրութեանց դէմ ո եւ է բողոք ոչինչ է եւ չեղեալ, քանի որ ընտրութիւնը սահմանադրութեան համաձայն եղաւ. թէ՝ Ազգ. Պատրիարքարանէն վերջերս հասած պաշտօնագիր մը հաստատելով ընտրութեանց օրինաւորութիւնը օտարահպատակներու Թաղական Խորհուրդի անդամակցութեան դէմ՝ Սահմանադրութիւնը ո՛ եւ է արգելք չը դներ. թէ՝ ընդհակառակն, նոյն իսկ մայրաքաղաքին մէջ, մէկէ աւելի են օրինակները օտարահպատակ Թաղականներու. թէ վերջապէս տեղիս հասարակութեան միահամուռ հաւանութիւնն ու կամքը կը ներկայացնէ Նորընտիր Թաղ. Խորհուրդը, եւ թէ՝ հետեւաբար, ինք, անմիջապէս այս ընտրութիւնը վաւերացնելով 'ի պաշտօնէ, կը ծանուցանէ զայն ի գիտութիւն Տեղիս հասարակութեան:

Սրբազան Առաջնորդը մէջ բերելով ժամանակին սղութիւնն ու իր ակարութիւնը, քարոզին մէջ յայտարարեց թէ՝ Նորընտիր Խորհուրդին օրհնութեան կոնդակը կարելի չ՝եղաւ հասցնել այս կիրակի օրուան, եւ թէ՝ այդ կոնդակն ալ պիտի կարդացուի մօտերս Ս. Եկեղեցիին մէջ:

Կրկին ու կրկին օրհնելով Նորընտիրները ու մաղթելով յաջողութիւն եւ կարողութիւն, աւարտեց իր քարոզը, որ ընդհանրապէս լաւ տպաւորութիւն թողուց ներկայ ժողովրդին վրայ:

— ՏԻԱՐ ՄԻՀՐԱՆ ԹԵԼԵԱՆ, որուն իրաւագիտութեան վարդապետի (Docteur en Droit) վկայականով վերջերս Պրիւքսելէ հոս ժամանումը ծանուցած էինք արդէն, արտօնուեցաւ, ինչպէս կ՝երեւի այսօրուան պաշտօնական օրաթերթէն (Journal Officiel), նախորդ ուրբաթ օր Խառն դատարանաց Նախագահ Տ. Պէլէի նախագահութեան ներքեւ գումարուած Ցանձնաժողովին որոշումով, դատավարելու եգիպտական Խառն Դատարանաց առջեւ, անմիջապէս ընդունուելով Վերաքննիչ Ատեանի (Cour d'Appel) փաստաբան:

Համակրելի փաստաբանը, քաջալերուած Վսեմ. Պողոս Բաշա Նուպարի իր վրայ ունեցած վստահութենէն ու գնահատումէն, համակերպած է Նորին Վսեմութեան մասնաւոր հրաւէրին վրայ, եւ Տեղիս Նորընտիր Թաղ. Խորհուրդին համամտութեամբ առժամապէս իր հոգածութիւնը դնելու Ազգ. Դիւանատան գործերուն, ի մասնաւորի վարչական բաժնին:

Փիինիկը, միշտ հետեւող տեղական ազգային շարժման մէջ մի քայլին, կը փութայ հրատարակել այս լուրը, եւ սրտագին խնդակցութիւններ արտայայտել Տիար Միհրան Թելեանի, որ, միակ հայ փաստաբանը կ՝ըլլայ քաղաքիս մէջ, ուր երկու հազարէ աւելի թուով հայ բնակչութիւն մը կայ:

Տեղիս հասարակութիւնը բնականաբար պիտի ուրախանայ երբ իմանայ թէ՝ հայ փաստաբան մը — որպիսին է Տիար Մ. Թելեան, — իր անձնուէր աջակցութիւնը պիտի դնէ Տեղիս Ազգ. վարչական գործերուն մէջ ալ, որպէսզի, ինչպէս կը գրէինք նախորդ թիւով, ժամանակէ մ՝ի վեր երեսի վրայ թողուած են, եւ որոնց կանոնաւոր ուղղութիւն մը տրուելուն մէջ իր դերը պիտի ունենայ համակրելի հայ փաստաբանը, որ արդէն Երկաթէ Պատրիարքին օրով Կ. Պոլսոյ Ազգ. Պատրիարքարանին մէջ պաշտօնավարած է ա՛յնքան եռանդով:

— ՀԱՑ ՆՈՒԱՊԱԾՈՒԱՑ ԽՈՒՄԲԸ, Ս. Վարդանանց Ազգ. Տօնին մասնակցելով արժանացած էր մասնաւոր համակրանքին Վսեմ. Կարապետ Պէյ Բէիզեանի, որ նոյն օրը, ի ներկայութեան խմբին Իտալացի Ուսուցիչին, խոստացած էր Նուագածուաց խմբին համազգեստները պատրաստել տալ, 70—80 ոսկիի մօտ ծախքով մը:

Այս գեղեցիկ խոստումը, ինկած պաշտօնաթերթին մէջ այնքան փայլուն եւ ուռուցիկ ներբողներով հրատարակուած, ջուրը ինկած է, որովհետեւ ...

Առջի օրը նոյն խմբի վարչութեան անդամներէն երեք երիտասարդներ որ կը դիմեն Վսեմ. Պէյին յիշեցնելու իր խոստումը եւ խնդրելու գործադրութիւնը, կը մերժուին փառաւորապէս:

Ահա՛ դաս մը, մեր երիտասարդութեան, այսուհետեւ չը վազելու շուքին ետեւէն իրենց սեփական ուժին մէջ փնտռելու յաջողութեան ու յարատեւութեան գաղտնիքը:

— ՏԻԱՐ Ս. ՊԵՆԼԵԱՆ, երեցագոյն դերա-

սանապետը, ամսոյս 19 ին շաբաթ իրիկուան ժամը 9ին, քաղաքիս Էտէն թատրոնին մէջ պիտի ներկայացնէ ազգային ծանօթ բանաստեղծ Տիար. Թ. Թէրզեանի ՍԱՆԴՈՒԽՏԸ: Կը սիրենք յուսալ թէ վաղեմի դերասանապետը պիտի քաջալերուի բազմախուռն ներկայութեամբ թատերասէր ազգայիններու, որոնք անշուշտ կը փափագին տեսնել գոնէ տարին մէկ երկու անգամ, հայկական ներկայացում մը:

ՊԱՐՍԿԱՀԱՅՔԸ

Պարսկաստանի հայաշատ կեդրոնն է «Սալմաստը», որ սահմանակից է Վասպուրականի «Աղբակ» գաւառին. ուր քանից աւելի գիւղում զետեղուել են 2000 տնից աւելի հայեր, որոնք մեծ մասամբ երկրագործութեամբ են պարապում: Աչքի է ընկնում այն գաւառում զուտ հայաբնակ «Հաւթվան» գիւղը, որը հայաբնակ գիւղերի կեդրոնն է համարվում 600 տան չափ բնակիչ ունենալով: Վերջին տարիներ այս գիւղը կարողացաւ «Կալա-բէկի» անունով պարսիկ գիւղատէրի բռնակալութիւնից ազատել, գնելով նրանից ամբողջ գիւղը իր հողային կալուածներով՝ գաւառական տեսուչ անմահ Աւետիսեանի եւ Առաջ. Փոխանորդ Արսէն Վարդապետ Վեհունու ջանքերով, ուր նաեւ վերջիններիս շնորհիւ շինուել է բաւականաչափ ընդարձակ ուսումնարան մը՝ իր ստորաբաժանմունքներով, ուր սովորում են գիւղական մանուկներ այն ուղղութեամբ, որ տեղից դուրս գալով — ընթացաւարտ լինելով — Գէորգեան ճեմարանն են մտնում. ինչպէս մինչեւ ցարդ 2–3 ճեմարանաւարտներ էլ եղել են այս գիւղից. որոնցից մինը դեռ սրանից երկու տարի առաջ ուսուցչութեան պաշտօն էր վարում իր գիւղում: Երկու տարի առաջ շինեցին գիւղացիք եկեղեցւոյ շրջաբակում մի առաջնորդարան՝ Օտեան Նորընծայ Գէորգ քահանայի յորդորներով: Որովհետեւ Եկեղեցու շրջակայքը բաւական լայն շինելատեղեր կան, մտադիր են գիւղացիներ տղոց ուսումնարանի մօտերը շինել նաեւ մի օրիորդաց ուսումնարան, սակայն կուսակցութիւնների պատճառով ցարդ ետ է մնացել. որով այս գիւղի իգական սեռը տգիտութեան խաւարի ամենաթանձր քօղի ներքեւ է ապրում ի վիշտ եւ ի ցաւ տեղւոյն բաւականաչափ զարգացած երիտասարդաց: Վերջիններն ըստիպուած են օտար երկիրներից կիներ ընտրել իրենց համար, որպիսիք լինին գէթ հայերէն պարզ գրող-կարդացողներ:

Ինչպէս Սալմաստի բովանդակ գիւղերը՝ նոյնպէս եւ Հավթվանի գիւղը «Զօլա» գետի աննման ջուրից են խմում, գործածում. այգիները եւ արտերը ջրում: Զօլան գոյանում է Տաճկաստանի ձիւնապատ լեռներից. եւ Սալմաստի պիտոյքները հոգալուց յետոյ՝ կէսից աւելին թափվում է «Կապուտան» — Ուրմիի ծովակը:

Հաւթվանի բնակիչները սրանից մի քանի տարի առաջ շատ բարեկեցիկ են եղել, բայց յանկարծ սեւ ջուր գոյանալով գրեթէ ամբողջ գիւղի տները փլցուց, այգիների եւ արտերի մեծ մասը փճացուց: Սրանից երեք տարի առաջ ողջ գիւղի տեղը ճախճային մի լճակ էր դարձել. հազարաւոր աղբիւրներ դուրս էին հոսում գետնից. մինչդեռ 6–7 տարի առաջ հորեր փորելով մինչեւ 20 կանգուն խորութեամբ չէին կարող ջուր գտնել գործածելու համար: Այժմ բոլորովին ցամաքել է, սակայն գիւղացիներին անհուն վնասներ հասցնելուց յետոյ: Սալմաստի ողջ գիւղերի մէջ միակ հիւրասէր գիւղն է Հավթվան. ուր տակաւին պահպանուել են բուն Հայաստանի կարգ մը սովորութիւնները, որպիսիք պիտի նկարագրեմ իր տեղը: Միայն թէ պարսկական շարք մը կեղծ

ու պատիր բնաւորութիւններ ազդել են այր մարդկանց վրայ։

Ինչպէս ուրիշ շատ վայրերում, (Պարսկաստանում) այնպէս էլ այս գիւղում կան մի քանի մարդեր, որոնք պարսիկ խաներէն աւելի խորամանկ միջոցներով մի մի խոշոր տզրուկներ դարձած ծծում են հասարակ ժողովրդեան արիւն քրտինքով վաստակած արդիւնքները։ Երբեմն էլ միմեանց հակառակ կուսակցութիւնների բաժանելով բնակիչները՝ ձգտում են իրարու ձեռքից խլել գեղապետական իշխանութիւնը կամ հոգաբարձու լինելու անդամակցութիւնը, որպիսի մի իշխանութիւն գոյութիւն ունեցել է՝ գիւղը գնուելուց վերջը։ Ինչպիսի անձնաւորութիւններից միայն խօսք յարմար մի անուն դրել են գիւղացիք տեղական բարբառով «*Մրռ*» որ նշանակում է *ցեց*, եւ ինչպէս յիշում եմ, այս վերնագրով «Արմէնիա» լրագրում մի վէպ էլ գրուեցաւ երկու տարի առաջ. եւ որն իւր արժանաւոր պատուհասին ենթարկուեցաւ՝ ժողովրդեան միահամուռ վրէժխնդրութեան ամենաբուռն հարուածների շնորհիւ։ Սակայն մի մրռի ձեռքից ազատուելով ժողովուրդը, ուրիշ շատ մրռերի ձեռքն ընկաւ, որոնց մասին տեղական լեզուաւ խօսք գեղեցիկ խօսում էր մի զուարճախօս գիւղացի։ «Տօ՛, էդ ի՞նչ մարդեր են, ուտես են, ծծես են, փորներ հաստացուցես են, ի՞նչ չեն էլ կշտանում»։ Մրռութեան ձգտում ունեցողներից մինն էլ պատկառելի մի գումար ծախսելով ռուսահպատակ դարձաւ, որպէս զի ռուսական հիւպատոսարանի զօրաւոր պաշտպանութիւնը վայելելով ջախջախէ իւր հակառակորդներին, մինչեւ իսկ իւր դէմ բարձր խօսողներին։ Այսպիսի հակառակութիւնների շնորհիւ, ամեն տարի մեծագումար տուգանքներ են վճարում *Սարիփարաստ*ներին — Քրիստոնէից դատաւորը — բայց եւ այնպէս՝ չեն խռովում։

Հաւթվանի գիւղ ունի ընդարձակ վարելահողեր եւ դրախտանման այգիներ ու առուետական անտառներ. սակայն կլիմայի ցրտութեան պատճառով Որմի գաւառի, գիւղերի չափ արդիւնք չեն կարող գոյացնել այգիներից. իսկ հողն խիստ անմշակ է. կարծես բնութիւն ստեղծել է այս գաւառը միայն հացաբոյսերու եւ անտառներու համար։ Հաւթվանից անմիջապէս յետոյ՝ երկրորդական տեղն են բռնում այս գաւառում՝ «Փայաճուկ» եւ «Ղալասար» գիւղերը, մանաւանդ Ղալասարը ուր բնակւում են Սալմաստի ամենահարուստ վաճառականներ, իրենց քաղաքացիական կարգ ու սարքերով, հոյակապ տուներով եւ ընդարձակ պարտէզներով, միմիայն բարեկեցիկ կեանք վարելով ու սպասելի իշխանական դիրքերը գրաւելով. որոնք Թաւրէզցիների հետ խնամիութիւն են անում եւ Պարսկաստանի ու Ռուսաստանի նշանաւոր քաղաքներում վաճառատուներ ունին, ինչպէս՝ Հաւրէթեանք, Արզումանեանք եւ այլք։

Փայաճուկ եւ Ղալասար գիւղերը այնքան մօտ են իրարու, որ կարող ենք երկու առանձին քաղեր համարել նրանց։ Փայաճուկում ապրում են տակաւին Րաֆֆիի մայրը, եղբայրներն ու քոյրերը, «Մելիքեան» մականունով. գրեթէ ամէն Հայ, որ ծանօթացել է անմոռաց վիպասանի գրքերի հետ, ուխտի են գնում նորա մանկութեան օրօրանին, տեսնել ու խօսել են ցանկանում նորա սառնուած — կիզած այլ տակաւին երեսների կարմրութիւնը չը կորուսող մօր հետ։ Տեսնողների վերայ մեծ պատկառանք են ազդում, ինչպէս նորա հարիւրամեայ մօրը՝ նոյնպէս եւ հնադարեան գերդաստանի տան դիրքն ու հայկական պարզութիւնները։ Մայր ու զաւակներ սիրով ցոյց են տալիս ուխտաւորներին Րաֆֆու գրասենեակը,

աշխատութեան խումբը եւ ծնած տեղը։ Ուրախութեամբ պատմում են հանգուցեալի կեանքէն զանազան գծերը — նմոյշները — մանաւանդ նորա պատանեկական եւ ամուսնութեան առթիւ ունեցած կեանքից։ Ամէն անգամ նորա տան գնալու, ընծանում մի ջերմեռանդ ուխտաւորի տպաւորութիւն էր թողնում մեծ վրդ. Դատեանի մայրը։

Ինչպէս Սալմաստում, նոյնպէս եւ ողջ Պարսկաստանում մարդահամարի սովորութիւնը մտած չը լինելով, հաւանական համարով միայն յայտնում են գիւղերի կամ քաղաքների բնակչաց թիւը. նոյն իսկ քահանաներ — եթէ երբէք ներելի է այս անունը տալ Պարսկաստանի ամենագէտ — Ջատուբուզ — գրաբաց տէրտէրներին — չեն իմանում իրենց ծխական ժողովրդեան թիւը։ Իսկ մենք որպէս ուղեւոր կամ զանազան գործերով պարապող՝ ժամանակ չունեցանք այս զգալի պակասը լեցնել։ Ինչպէս յիշում եմ, Խաչիկ վարդապետ Դատեանց այս պաշտօնով շրջեցաւ ողջ Ատրպատականի հայաբնակ վայրերը. սակայն փոխանակ իր հետ տարած տպեալ տոմարները լեցնելուն, տասնեակ բեռներով հնութիւնները փոխադրեց էջմիածին, միամիտ ժողովրդեան շորթելով հազար ու մի խաբեբայական խոստումներով, որին «խաչագողների վարպետ» անունով կնքեց ժողովուրդը։ Չեմ ուզում այս վարդապետի տգեղ կողմերը երեւան հանել, վասն զի Պարսկաստանում եւ թէ Ռուսաստանում նորա հետ ծանօթացողները լաւ գիտեն թէ ինչ նկարագրի տէր անձնաւորութիւն է այս անռելի վարդապետը։

Ն —եր.

Շարունակելի

ՍՏԻՊՈՂԱԿԱՆ

ՓԻՒՆԻԿԻ Բ. ՏԱՐԵՇՐՋԱՆը լրանալու մօտ է, բայց Եգիպտոսի ու Արտասահմանի մեր բաժանորդներէն շատերը դեռ չեն վճարած իրենց այս տարուան բաժանորդագրութիւնը։

Շաբաթաթերթիս հրատարակութիւնն ու առաքումը կանոնաւորապէս շարունակել կրնալու համար կը խնդրուի որ մեր Պատ. Բաժանորդները հաճին փութով հասցնել իրենց բաժանորդագինը ՄԱՆՏԱՐՈՍԹՈՎ, մեր հասցէին.

Գ. ԵՒ Ա. ԹՕԳԱԹԵԱՆ ԵՂԲԱՐՔ

ԿԱՀԵՂԻՆԱՑ ՅԱՐԴԱՐԻՉՔ

Tapissiers et décorateurs

Քաղաքիս երեւելի հայ տուներուն ծանօթ յաճախորդ, կը պատրաստեն գոհացուցիչ պայմաններով ամեն տեսակ կահեղէններ, վարագոյր, եւն։

Յանձնարարութիւնք խնամով կը կատարուին։

Դիմել. *Ատտարին, Ռուէլ-էլ-Զահապի,*

Attarine Ruelle-el - Zahaby

« ԱՐԱՔՍ »

Հայկական տպարանը թէ՛ հայերէն, թէ՛ գաղղիերէն և թէ՛ ուրիշ լեզուներով ամեն տեսակ տպագրական գործեր կը կատարէ մեծ խնամով եւ, ինչ որ նուազ կարեւոր չէ,

ԽԻՍՏ ՉԱՓԱՒՈՐ ԳԻՆԵՐՈՎ։

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԳ

Ով որ կը փափագի սեղեկին գեղեցիկ եւ արժանավայել զարդ մը ունելցնել, թող բարեհաճի ղրկել մեր հասցէին 2,50 Ֆրանկ, 1 ռուբլի կամ 50 սէնթ, փոխարէն՝ ապահովագրեալ ծրարով, կ'ընդունի Հայոց սիրելի ՆԱ.ՀԱՊԵՏԻ Հ. ԱԼԻՇԱՆԻ մեծադիր լուսատիպ պատկերն, յատուկ խնամքով տրպուած 50 էն 65 հարիւրամեայ մեծութեամբ, փայլուն եւ սուտար թուղթի վրայ։ Գործակալաց եւ մեծամանակ գնողաց իւրաքանչիւր տասը օրինակի վրայ մէկ օրինակ ձրի կը ղրկուի։

Դիմեն կանխիկ

Simon Nahabed & C°.

VENISE
(Italie)

S. Giov. Grisostomo 57 15

ԾԱՆՕԹ. Կը փութանք յայտնելու ազնիւ ազգայնոց որ ի մօտոյ պիտի հրատարակենք նաեւ մեծադիր լուսատիպ, առաջնակարգ եւ ամենահետաքրքրական պատկեր մը, որ կը ներկայացնէ հռչակաւոր ազգային գործիչներու ժողով մը։

Նոյն պատկերին լուսատիպ քարտերն եւս կը պատրաստենք։

ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐՈՒՆ

Սուրիացի հայ երիտասարդ մը, տարիներէ ի վեր Եգիպտոս հաստատուած, եւրոպական բանի մը լեզուներու հմուտ, ու բաց արաբագէտ միանգամայն, պատրաստ է վաճառականաց արաբերէն թղթակցութիւնները կատարել գոհացուցիչ պայմաններով։

Մանրամասնութեանց համար դիմել Խմբագրատունս կամ «ԱՐԱՔՍ»ի տպարանը։

SALAMANDER

ՍԱԼԱՄԱՆԴՐ

Ապահովագրական Ընկերութիւն ընդդէմ հրդեհի.

ԱՄՍԹԵՐԴԱՄ

Դրամագլուխ 3,125,000 ֆրանգ

L'ALLIANCE

Լ'ԱԼԻԱՆՍ

Ծովային Ապահովագրական Ընկերութիւն.

ՊԵՐԼԻՆ

Դրամագլուխ 5,000,000 ֆրանգ

Ամեն կերպ Ապահովագրութիւնք կ'ընդունուին ընդդէմ հրդեհի ինչպէս նաեւ Ծովային, Գետային և Ցամաքային փոխադրութեանց արկածներու դէմ.

Դիւրամատչելի գներ և պայմաններ

Դիմել առ Ընդհանուր Գործակալ եւ Լիազօր-Փոխանորդ

ՄԻՀՐԱՆ ԳԱԼՖԱԵԱՆ

Աղեքսանդրիա, պզտիկ Մենշիէ Ապուտարտա փողոց թիւ 10

Տպագր. Հայկ. Տպ. «ԱՐԱՔՍ»ի Աղեքսանդրիա

Le Gérant, J. Munier